Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

342

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄ

ՓՈԽ. ՈԳՆՈՒԹ. ԳՅՈՒՂ. ԸՆԿ. ԿԵՆՏԿՈՄ

Հրատարակություն № [illegible]

# ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 1924

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՍՈՑԱՊԺՈՂԿՈՄ

ՓՈԽ. ՈԳՆՈՒԹ. ԳՅՈՒՂ. ԸՆԿ. ԿԵՆՏԿՈՄ

Հրատարակություն № 1

# ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԽԻՎ

Յերեվան 1924

214-ԱԳՂ

Պատ. 1296 Տրեստի I Տպարան Տիրաժ 3500

# ՓՈԽ. ՕԳՆ ԳՅՈՒՂԱՑ. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված Հ. Ս Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 3-րդ նստաշրջանի կողմից 18 նոյեմբերի 1924 թ.

Գյուղի աշխատավոր, շահագործվող ու չքավոր տարրերին, և կարմիր բանակայինների ընտանիքներին՝

ա) նյութապես և բարոյապես օգնելու,

բ) նրանց տնտեսությունը բարձրացնելու,

գ) ունևորների շահագործումից նրանց պաշտպանելու և

դ) նրանց շարքերում համայնականություն և ինքնագործունեություն զարգացնելու նպատակով.—

Հ. Ս. Խ. Հ. գյուղերում և գավառակներում ներքո հիշյալ հիմունքներով, կազմակերպվում են գյուղացիների Փոխադարձ Օգնության ընկերություններ։

## I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունները հիմնվում են գյուղի այն բնակիչների ընդհանուր ժողովի վորոշմամբ. վորոնք Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության համաձայն բանվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների ընտրությանը մասնակցելու իրավունք ունեն։

2. Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերություններն իրավաբանական անձի իրավունքներ են վայելում և իրենց գործունեության մեջ ամբողջ աշխատանքը կազմակերպում են գոյություն ունեցող օրենքների շրջանակներում Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի ընդհանուր ղեկավարությամբ։

Սոցիալական Ապահովության ժողովրդական կոմիսարիատն իրավունք ունի իր տեղական մարմինների միջոցով կասեցնելու և ջնջելու ընկերության այն որոշումները, որոնք խախտում են գոյություն ունեցող օրենքներն ու սահմանված կարգով հրատարակված կանոնները։

3. Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունն իրավունք ե վայելում Խորհրդային իշխանության գործող օրենքների և կարգադրությունների համաձայն.

ա) Գույք ձեռք բերել իբրև սեփականություն և օգտագործման համար.

բ) Գրավ դնել և օտարացնել իրեն պատկանող ամեն մի գույք, որոնց թվում և շենքերը.

գ) Օգտագործելու համար ստանալ և վարձու վերցնել հողամասեր ու ձեռնարկություններ.

դ) Կնքել փոխառություններ և առհասարակ ամեն տեսակ գործարքներ.

ե) Ընդունել նվիրատվություններ.

զ) Պահանջատեր և պատասխանող հանդիսանալ դատարանում։

4. Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունն իր պարտքերի համար պատասխանատու է իր ամբողջ գույքով։

Ընկերության պարտքերի գանձումը չի կարելի դարձնել անդամների գույքի վրա։

5. Ընկերությունն ունի սահմանված օրինակի կնիք։

6. Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունները սույն կանոնադրությամբ սահմանված իրենց գործունեության ընթացքում ազատվում են ընկերության գործերի համար պետական և տեղական բոլոր տեսակի հարկերից, տուրքերից, այլև դրոշմատուրքից ու դատական տուրքերից։

## II

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գյուղական բնակչության ինքնագործունեության հիմունքներով գործող Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերության մերձավոր նպատակն է.

ա) Հասարակական սոցիալական; ապահովության կազմակերպել ու իրագործել, ամեն տեսակի օգնություն հասցնել գյուղական չքավոր բնակչությանը, Զինվորական ծառայողների ընտանիքներին, հաշմանդամներին, տարերային և սոցիալական աղետներից տուժածներին, այրիներին, որբերին, հիվանդներին և գյուղի կարոտյալներին:

բ) Պաշտպանել ընկերության անդամների ներքին տնտեսական և իրավական շահերը:

գ) Մաքառել անխնամության, մուրացկանության, պոռնկության և հարբեցողության դեմ:

դ) գյուղացիության մեջ ինքնագործունեության և առողջ նախաձեռնության սկզբունքներ զարգացնել ու ամրապնդել հասարակական փոխադարձ օգնության կազմակերպելով, գյուղի և գավառակի այլ և այլ հասարակական կազմակերպությունների գործունեությանն աջակցելով:

8) Գյուղի աշխատավոր բնակչությանն աջակցել:

ա) Միացնելով թույլ ու միջակ տնտեսությունները աշխատանքի հավաքական կոլեկտիվների շուրջը:

բ( Կազմակերպել հաշմանդամների աշխատավորական միություններ:

գ) Անտեր հողերի վրա գնելով տարածել կոոպերացիան:

դ) Դյուրացնել չքավոր և միջակ գյուղացիների անդամագրվելը կոոպերատիվներին:

ե) Տարածելով գյուղատնտեսական, բնագիտական և հասարակական գիտելիքներ:

գ) Աջակցելով պետական մարմիններին՝ ընկերության գործունեության շրջանում գտնվող հաշմանդամների համար հիմնարկություններ, հիվանդանոցներ, դպրոցներ. մանկատներ, մսուրներ, ձրի ճաշարաններ, խրճիթ-ընթերցարաններ և այլն սարքավորելու, պահպանելու և նրանց պետքերը հոգալու, իսկ հնարյղած դեպքում այդպիսի հիմնարկություններ բանալ և պահպանել սեփական միջոցներով՝ պատշաճ մարմինների թույլտվությամբ և նրանց ընդհանուր վերահսկողության տակ։

ե) Ստեղծելով փոխադարձ օգնության դրամական և նյութական ֆոնդեր։

զ) Մասնակցել պետական հասարակական և մասնավոր հիմնարկություններից ու անձերից գյուղական բնակչության օգնություն հասցնելու համար տրված միջոցների բաշխմանն ու օգտագործմանը, այլև բաշխել այն գումարները, որոնք մտնում են փոխադարձ օգնության ընկերության անմիջական տնօրինության տակ։

8. Փոխադարձ օգնության ընկերությունները իրենց գործոն թեկնածուներն են առաջ քաշում խորհրդային և կոոպերատիվ պաշտոնների համար գյուղական բնակչության չքավոր մասի շահերն պաշտպանելու նպատակով։

## III

## ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

9. Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունները իրենց աշխատանքը կազմակերպում են թե գյուղացիական բնակչության հասարակական ինքնօգնության ուղղությամբ (համայնական վարուցանքս կազմակերպել, գյուղացիության կենցաղը բարելավել, հանրօգուտ հիմնարկություններ, հաշմատներ, դպրոցներ, մսուրներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ և այլն հիմնելն ու պահել և այլն) և թե

ճակատայիններին անհատական օգնություն հասցնելու ուղղությամբ։

10) Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերություն հասցրած օգնությունը կարող է լինել դրամական, մթերքներով, նյութերով, աշխատանքով և իրավաբանական։ Նյութական օգնությունը ցույց է տրվում վերադարձնելու պայմանով կամ անդարձ։

ա) Դրամական օգնությունն արվում է դրամական փոխառությամբ և վորպես նպաստ։

բ) Նյութական օգնությունն արվում է կենդանի և անշունչ ինվենտար հայթայթելով, ժամանակավոր օգտագործման համար տալով, շինության փայտեղեն և այլ նյութեր ստանալու արտոնություններ ձեռք բերելով և այլ յեղանակներով՝ ընկերության կոմիտեյի հայեցողությամբ։

գ) Աշխատանքով օգնությունն արվում է աշխատող ձեռքեր տրամադրելով, շաբաթօրյակներ և կիրակնօրյակներ կազմակերպելով արտերը սերմանելու, հնձելու, շենքեր կառուցելու համար և այլն։

դ) Իրավաբանական օգնությունը ցույց է տրվում նրանով, վոր ընկերության կոմիտեն պաշտպանում է ընկերության անդամների, վորբերի, այրիների, կարմիր զինվորների ընտանիքների և այլ չքավոր քաղաքացիների տնտեսական և իրավական շահերը (հսկում է, վոր ըստ օրենքի և ժամանակին նրանց արոտատեղիներ և հողեր տրվեն, օրենքի հակառակ նրանց իրենց բնակարաններից վտարելու առաջն է առնում, պաշտպանում է կուլակների հարստահարություններից, հսկում է, վոր օրենքով սահմանված արտոնությունները տրվեն կարմիր զինվորների ընտանիքներին, սակավազոր տնտեսություններին և այլն)։

11) Օգնության հիշյալ տեսակները հասցնելու կարգը, հերթը և չափը սահմանում է ընկերության

կոմիտեն անդամների ընդհանուր ժողովի հավանությամբ կամ նրա վորոշմամբ։

IV

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

12) Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերության անդամ են հանդիսանում ընկերության գործունեության շրջանում գտնվող 18 տարին լրացած յերկու սեռի անձինք, վորոնք բանվորական ու գյուղացիական պատգամավորների խորհուրդների ընտրության իրավունք են վայելում։

13) Ընկերության անդամներն անդամագրվելիս միանվագ անդամավճար են տալիս և ըստ ընկերության կարիքի պարբերական վճարներ։ Այդ վճարների չափը, կարգը և ժամանակը վորոշում է ընկերության անդամների ընդհանուր ժողովը։ Վճարները սահմանվում են ամեն մի առանձին տնտեսության համար, անպայման հաշվի առնելով նրա կարողության աստիճանը, փոխադարձ օգնության ամբողջ ընկերության համար ընդունված վորեվե ընդհանուր նշանի համեմատ հողի ու անասունների քանակության, ընտանիքի կազմի (աշխատողների թվի) և այլն։

Ընկերության անդամները բացի դրանից, ընդհանուր ժողովի վճռի համաձայն ընկերության կոմիտեյի վորոշած անհրաժեշտ դեպքերում, պարտավոր են տալ հօգուտ ընդհանրության և ընկերության սուր կարիք ունեցող առանձին անդամներին, թե իրենց անձնական աշխատանքը և թե իրենց կենդանի ու անշունչ գյուղատնտեսական ինվենտարը ժամանակավոր օգտագործման համար։

Ծանոթություն.—Սակավազոր տնտեսություններին արտոնություններ պետք տրվեն ժամանակելով նրանցից գանձելի վճարները կամ

նվազեցնելով նրանց չափը կամ թե դրամական կամ մթերային վճարը փոխարինելու անձնական աշխատանքով, կամ իսպառ ազատելով վճարից։ Իսկ ավելի ունևոր տնտեսությունների նկատմամբ վճարները պետք է ավելացվեն։

14. Ընկերության անդամները կարիք ունեցած բոլոր դեպքերում տարերային ու սոցյալական աղետների ժամանակ, (հրդեհների, կարկտահարության, հեղեղների, անբերրիության, անասունների անկման, կողոպուտների և այլ դեպքերում) իրավունք ունեն ընկերությունից և նրա անդամներից օգնություն ստանալ նույն կանոնադրությամբ նախատեսված կարգով և հասարակական փոխադարձ օգնության գյուղացիական կենտրոնական կոմիտեի ցուցմունքներով։

15. Ընկերության այն անդամները, վորոնք համառությամբ չեն հնազանդվում ընկերության կոմիտեի օրինական պահանջների և ընդհանուր ժողովների վորոշումներին, այլ և ընկերությանն իրենց գործունեությամբ վնաս հասցնողները, ընդհանուր ժողովի վճռով կարող են արտաքսվել ընկերությունից վորոշ ժամանակով, վորի մասին հայտարարվում է ընկերության գործունեության շրջանում։

16. Ընկերության անդամներն իրավունք ունեն բողոքելու անդամների ընդհանուր ժողովին, ընկերության կոմիտեի այն վորոշումների դեմ, վոր իրենց սխալ են համարում։

17. Թույլ չի տրվում ընկերության անդամներից ընկերությանը հասանելիք վճարներն ու տուրքերը հարկադրաբար—վարչական կարգով գանձել, ինչպես նաև նույն կարգով աշխատանքի, փոխադրական և այլ պարտականությունները կատարելու հարկադրելը հօգուտ ընկերության և նրա անդամների։ Եթե նախազգուշացումը ու ընկերության ներգործության միջոցներն սպառված լինեն, անհրաժեշտ վճարումները

իրենց պարտականությունները կատարել տալու համար կարելի յե դատ հարուցել ժողովրդական դատարանում. վորի վճիռն ի կատար է ածվում օրինասահմանած ընդհանուր կարգով:

V

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

18. Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերության միջոցները կազմվում են.

ա. անդամների՝ անդամագրության յեվ պարբերական դրամական ու մթերքներով տված վճարներից.

բ. փոխադարձ օգնության կարիքների համար սոցիալական ապահովագրության մարմինների, այլ խորհրդային հիմնարկների, կազմակերպությունների յեվ առանձին անձանց դրամով յեվ մթերքներով տված միջոցներից.

գ. սոցիալական ապահովագրության մարմիններին հանձնված տիրազուրկ, անժառանգ այլ և դատական վճռով յեվ վարչական կարգով այդ մասին գոյություն ունեցող օրենքների համաձայն հօգուտ պետական գանձարանի գրավված գույքերը.

դ. Վարձակալական կամ ընկերության պատկանող գույքերից ու ձեռնարկություններից, այլ և համայնական վար ու ցանքսից ստացվող դրամական և բնական հասույթներից.

յե. Կամավոր նվիրատվություններից՝ թե դրամով և թե նյութեղենով

զ. Պատահական հասույթներից

19. Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունը յուր անդամների կարիքները հոգալու համար, իրավունք ունի վարելու և կազմակերպելու գյուղատնտեսական օժանդակ ձեռնարկություններ, այն է՝ գյուղատնտեսական գործիքների նորոգության արհեստանոցներ, գյուղատնտեսական մթերքների վերամշակության ձեռնարկություններ, [illegible]

վարձատրություն, հացահատիկներ զտող կայանները, ձիթահաններ, ամբարագործության ձեռնարկություններ, հասարակական դպրոցներ, թեյարաններ, ճաշարաններ և այլն։

Հիշյալ ձեռնարկությունները, եթե բացառապես փոխադարձ օգնության անդամների կարիքները հոգալու համար են, ազատվում են թե համապետական և թե տեղական ամեն տեսակի հարկերից ու տուրքերից։ Եթե ձեռնարկությունը մասամբ սպասարկում է նաև ոչ ընկերության անդամներին, այդ դեպքում ամեն մի այդպիսի ձեռնարկություն ենթակա է հարկերի և տուրքերի, բայց վայելում է 1923 թ. դեկտեմբերի 7-ի դեկրետով սահմանված արտոնությունները («Համաքավարքեր ԽՍՀՄ Կենտգործ. Կոմիտեյի 1923 թվ. №9 հոդ. 274)։ Այն դեպքերում, երբ այդ կարգի ձեռնարկություններից համապետական հարկեր են պահանջվում. գավառական գործադիր կոմիտեների որոշմամբ նրանք կարող են ազատվել տեղական հարկերից ու տուրքերից և տեղական միջոցներ կազմող վճարներից։

20. Ընկերության դրամական և նյութական ֆոնդերը, ընկերության կոմիտեն ծախսում է բացառապես սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար։ Այդ ֆոնդերը չեն կարող որևէ այլ կողմնակի կարիքների համար ծախսվել։ Իշխանություն և ոչ մի մարմին իրավունք չունի տնօրինելու ընկերության միջոցները։ Ընկերության միջոցները կանոնավոր ծախսելու վրա հսկում են հասարակական փոխադարձ օգնության գյուղայինական վերստուգիչ կոմիտեները, գյուղական խորհուրդը և Գավառական Գործադիր Կոմիտեն։

**Ծանոթություն.**— Ընկերության միջոցները սույն կանոնադրությամբ չնախատեսված կարիքների վրա ծախսելու համար, մեղավորները պատասխանատու են ՀՍԽՀ Քրեակ. Օրենսգ. 105 և 106 հոդվածների համաձայն։

## VI
## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ
### ընդհանուր ժողովը

21. Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերության վարիչ մարմիններն են՝ ընկերության անդամների ընդհանուր ժողովը (իսկ գավառակում—լիազորների ժողովը) և ընկերության կոմիտեն։

Ընդհանուր ժողովը (գավառակում՝ լիազորների ժողովը) փոխադարձ օգնության գյուղացիական ընկերության գերագույն ղեկավար մարմինն է։

Ընդհանուր ժողովները լինում են հերթական, որը գումարում է կոմիտեն ոչ պակաս քան ամիսը մի անգամ, և արտահերթ, որը գումարվում է կոմիտեյի հատուկ որոշումներով կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ (պր. 26) կամ թե ընկերության անդամների ոչ պակաս մեկ չորրորդի գրավոր հայտարարության հիման վրա։ Փոխադարձ օգնության գյուղացիական վերադաս կոմիտեյի պահանջմամբ։ Լիազորների ժողովը գումարվում է գավառակային գործադիր կոմիտեյի և համապատասխան փոխադարձ օգնության գյուղացիական վերադաս կոմիտեյի պահանջմամբ։ Ընդհանուր ժողովի օրակարգի խնդիրների, նրա գումարման օրվա և ժամանակի մասին գյուղական ընկերության անդամներին գյուղական խորհրդին և գավառակային գործադիր կոմիտեյին տեղեկություն պիտի տրվի ժամանակին (ոչ ուշ քան յերկու օր առաջ)։

**Ծանոթություն.**—Ընդհանուր ժողովի որոշումները պարտադիր են ընկերության բոլոր անդամների, թե ժողովին ներկա գտնվողների և թե բացակաների համար։

22. Փոխադարձ Օգնության գավառակային գյուղացիական ընկերությունները գործում են լիազորների ժողովների միջոցով, որոնց ընտրում են գավա-

ռակէ սահմաններում գտնվող Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունները։ Իրենց գործունեության այս ասպարեզներում պակասային ընկերությունները ղեկավարում են Փոխադարձ Օգնության գյուղացիական ընկերությունների համար պարտադիր կանոններով ու վորոշումներով։

23. Փոխադարձ օգնության ընկերության կոմիտեն ընկերության գործադիր մարմինն է, վորին լիազորում է ընկերության անդամների ընդհանուր ժողովը՝ մի տարով։ Կոմիտեն ընտրում է նախագահ և փոխնախագահ կամ նախագահություն։

Ծանոթություն.—Կոմիտեյի անդամներին իրենց աշխատանքների համար կարող են վարձատրություն տալ ընկերության անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ։

24. Կոմիտեյի նիստերը տեղի յեն ունենում հարկ յեղած դեպքերում, բայց վոչ պակաս քան շաբաթը մի անգամ։ Կոմիտեն ընկերության անունից հանդես է գալիս ամենուրեք առանց հատուկ փոխանորդագրի։ Կոմիտեն յուրաքանչյուր ամիս իր գործունեության մասին տեղեկագիր է տալիս ընդհանուր ժողովին և հասարակական փոխադարձ օգնության վերադաս կոմիտեյին։ Կոմիտեն պատասխանատու յե իր բոլոր գործունեությունների և ընկերության միջոցները կանոնավոր ծախսելու համար։

Ծանոթություն.—Հաշվետվության ձևերն ու կարգը սահմանում է հասարակական փոխադարձ օգնության գյուղացիական կենտրոնական կոմիտեն։

25. Կոմիտեն, վորը գործում է ընդհանուր ժողովի ցուցմունքներով. հաշվի յե առնում կարոտյալ գյուղացիներին, կարմիր զինվորների ընտանիքներին, հաշմանդամներին, անխնամ մնացածների, մուրացիկներին, այրիների, վորբերի և այլ տնտեսությունները։ Կոմիտեն պահում է ֆոնդերը մանող դրամի և նյու-

թերի ծախսվող գումարների յելքի և մուտքի մատյան-ները. Նույնն է պատրաստում ընդհանուր ժողովների համար. Ներկայացնում է ընդհանուր ժողովներին ի-հաստատություն յելքի և մուտքի նախահաշիվներն ու գործունեության ծրագրները. Ներկայացնում է իր յենթադրությունները փոխադարձ օգնության տեսակ-ների, չափերի և ձևերի մասին, ձեռնարկությունները հիմնելու և վարձելու, շենքեր ձեռք բերելու. գույք վաճառելու և գրավ դնելու, փոխառություններ կնքե-լու մասին և այլն։

26. Կոմիտեյում գործերը վճռվում են ձայների մեծամասնությամբ։ Ընդունված վճիռներն արձանա-գրվում են։ Կոմիտեյի գրագրության տեխնիքական մասը սովորաբար կատարում են գյուղական խորհըր-դի և Գավառային Գործադիր Կոմիտեյի ծառայողները։ Սակայն կոմիտեն անհրաժեշտ յեղած դեպքում, ընդ-հանուր ժողովի համաձայնությամբ, կարող է տեխնի-քական քարտուղար և անհրաժեշտ մասնագետներ հը-րավիրել։

VII

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱՍՏՈՒԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՆՐԱ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ

27. Ընկերության ամբողջ հաշվետվությունը վեր-ստուգելու, ունեցած գույքն ու բոլոր ֆինանսա-տնտե-սական գործերն ստուգելու համար, ընկերության ան-դամների ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը), մի տարի ժամանակով, յերեք հոգուց բաղկացած, վեր-ստուգիչ հանձնաժողով է ընտրում։

28. Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի վերստուգումներ անել ու ամեն ժամանակ բայց ոչ պակաս քան յերեք ամիսը մեկ անգամ։ Ընկերու-թյան անդամների կամ լիազորների հերթական ժողով-ներին վերստուգիչ հանձնաժողովը զեկուցում է նե-

կայացնում ընկերության գործունեության յեվ նրա հաշիվների վճռակի մասին:

29. Ընկերության գործունեության բոլոր կողմերը վերստուգելու իրավունք ունեն փոխադարձ ոգնության ընկերությունների գյուղացիական վերստուգա-կոմիտեներն ու այլ վերահսկիչ մարմինները:

## VIII

## ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ.

30. Փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների անդամները ավելի հաջողությամբ գլուխ բերելու նպատակով ընկերության հիմունքներով ստեղծվում են հասարակական փոխադարձ ոգնության գավառակային, գավառական յեվ կենտրոնական գյուղացիական կոմիտեներ, վորոնք գործում են սոցիալական ապահովության մարմինների հետ սերտ կապված ու միասին: Հիշյալ կոմիտեների ֆունկցիաները, նրանց կազմելու յեվ գործունեության կարգը վորոշում է սոցիալական ապահովագրության ժողովրդական կոմիսարիատը:

31 Մշտական կապ հաստատելու, մյուսների փորձառությունից ոգտվելու աշխատանքի յեվ գործունեության ընդհանուր ծրագիր մշակելու յեվ նման այլ խնդիրներ լուծելու համար, գումարվում են, փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների գավառական գավառական յեվ հանրապետական համագումարներ կամ կոնֆերանսներ:

32. Փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների արձանագրությունը և նրանց գործունեությունը դադարեցնելու, ընկերությունների ընդհանուր և պատգամավորական ժողովներ, համագումար ու կոնֆերանսներ գումարելու կարգը. այլ յեվ ընկերությունների յեվ թե նրանց միությունների ու համա-

ցուժարների գործունեությունը կարգավորում է սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատը հրատարակած կանոններով ու հրահանգներով։

33. Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունների տոմարապահությունը սույն կանոնադրության հիման վրա կատարում են սոցիալական ապահովության մարմինները։

## IX

## ԸՆԿԵՐ ԻԹՅԱՆ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵԼԸ ՅԵՎ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ.

34 Ընկերության գործունեությունը դադարում է խորհրդային իշխանության մարմինների վորոշմամբ կամ ընկերության անդամների ընդհանուր ժողովի վճռով։ Առաջին դեպքում, լիկվիդացիան տեղի յե ունենում միայն Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի ցուցմունքներով, յերկրորդ դեպքում՝ լիկվիդացիայի մասին արված վճիռն ույժ է ստանում յեթե ընդունված է ձայների 2/3 մեծամասնությամբ և հաստատված է յերկու միմյանց հաջորդող ընդհանուր ժողովներում, վորը պիտի գումարվի մեկը մյուսից յերկու շաբաթ հետո։

35. Լիկվիդացիան կատարվում է վորոշումը տեղի ունենալուց հետո մի ամսվա ընթացքում։ Փոխադարձ օգնության ընկերության բոլոր գործերը, գույքն ու դրամը լիկվիդացիայից և անվիճելի հանձնառությունները վճարելուց հետո, անցնում են ի տնորինություն համարական փոխադարձ օգնության գյուղացիական վերադաս կոմիտեյի սույն կանոնադրության 31 րդ պրակի համաձայն հրատարակվող հրահանգների կարգով։

Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ս. Համբարձումյան

Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ [illegible]յան

ՀՀ Ազգային գրադարան
NL0836024

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Ա92
214